ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայ Էլեկտրական Ցանցեր Փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին պատճառված վնասի հատուցման և նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում պատասխանատվության միջոցների կիրառության վերաբերյալ

Սույն վերլուծությունն իրականացվել է «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) դիմումատուների ներկայացրած երկու խնդիրների հիման վրա, որոնցից մեկը վերաբերում է Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ի (այսուհետ՝ ՀԷՑ) կողմից էլեկտրամատակարարման պարտավորությունը չկատարելուն, իսկ մյուսը՝ այդ պարտավորության ոչ պատշաճ կատարման արդյունքում սպառողների գույքին վնաս պատճառելուն:

Խնդիր 1

Դիմումատուի ներկայացրած տվյալների համաձայն՝ 2025թ. Հոկտեմբերին իր բնակարանը հոսանքազրկվել է 24 ժամով, որի կապապցությամբ ՀԷՑ-ը նախապես որևէ տեղեկություն չի հրապարակել: Հոսանքազրկումից ժամեր անց Դիմումատուն շուրջօրյա հեռախոսային ծառայության (1-80) միջոցով տեղեկացել է էլեկտրաէներգիայի արտապլանային ընդհատման մասին, որի վերականգնման վերաբերյալ հրապարակվել է հստակ ժամկետ: Սակայն նշված ժամկետի ավարտից հետո էլեկտրաէներգիայի մատակարարումը չի վերականգնվել և սահմանվել է վերականգնման նոր ժամկետ: Այս՝ փոփոխված ժամկետի ավարտից հետո նույնպես նշված բնակարանում չի իրականացվել էլեկտրաէներգիայի մատակարարում, իսկ մատակարարման վերականգնման ժամկետը ևս մեկ անգամ երկարաձգվել է: Արդյունքում Դիմումատուի բնակարանը շուրջ 24 ժամ եղել է հոսանքազրկված:

Տվյալ դեպքում հարց է առաջանում. *Ի՞նչ պարտականություններ ունի մատակարարը սպառողների էլեկտրական էներգիայի արտապլանային ընդհատման դեպքերում, և ի՞նչ կարող է պահանջել սպառողը մատակարարից իրեն պատճառված անհարմարությունը վերացնելու համար:*

Դիմումատուի ներկայացրած փաստաթղթերում առկա է ՀԷՑ ՓԲԸ-ի և Դիմումատուի մեջև կնքված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման մասին պայմանագիր, որով սահմանված է, որ կողմերը միմյանց նկատմամբ ունեցած պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում **ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 27.12.2006թ. № 358-Ն որոշմամբ** (այսուհետ՝ Որոշում) սահմանված կանոններով:

Նշված Որոշման 22-րդ կետի համաձայն՝ Մատակարարը պարտավոր է սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին:

Որոշման 28-րդ կետի համաձայն՝ Մատակարարը քաղաքային համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝ սպառողի էլեկտրամատակարարումը

պարտավոր է վերականգնել արտապլանային ընդհատման պահից ոչ ուշ, քան՝ 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից էլեկտրամատակարարվող սպառողների համար՝ 2 ժամում, իսկ մյուս բոլոր դեպքերում՝ 4 ժամում:

Նույն կետի համաձայն՝ Մատակարարը գյուղական համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել արտապլանային ընդհատման պահից ոչ ուշ, քան՝ 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից էլեկտրամատակարարվող սպառողների համար՝ 2 ժամում, իսկ մյուս բոլոր դեպքերում՝ 8 ժամում:

Որոշման 77-րդ կետի համաձայն՝ Մատակարարը պարտավոր է սպառողին վճարել տույժ՝ սպառված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 2500 դրամը, այն դեպքերում, երբ խախտել է՝ (…) էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատումից հետո՝ սույն կանոնների 28-րդ կետում սահմանված ժամկետում, սպառողի էլեկտրամատակարարման վերականգնման ժամկետը (…):

Առաջնորդվելով վերը մեջբերված կարգավորումներով՝ Դիմումատուի անունից գրված դիմումով պահանջ է ներկայացվել ՀԷՑ ՓԲԸ-ին՝ իր պատավորությունների չկատարման համար սպառողին տույժ վճարելու վերաբերյալ:

Սակայն ՀԷՑ ՓԲԸ-ն սկզբնապես հրաժարվել է Դիմումատուին վճարել սահմանված տույժը՝ պատճառաբանելով, որ **27.12.2006թ. № 358-Ն որոշումը ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 25.12.2019թ. № 517-Ն որոշմամբ** (որն ուժի մեջ է մտել 2021 թվականի փետրվարի 1-ից): Այս՝ **№ 517-Ն** որոշման 106-րդ կետով սահմանված է Բաշխողի (Մատակարարի) կողմից սպառողին վճարվող տույժի հաշվարկման նոր կարգ, ըստ որի՝ Բաշխողը Սպառողին վճարում է տույժ՝ Երաշխավորված մատակարարի կողմից մատակարարված էլեկտրական էներգիայի միջին ամսական քանակի և տվյալ ժամանակահատվածին Սպառողական խմբի համար սահմանված սակագնի արտադրյալի չափով, բայց ոչ ավելի, քան 2500 դրամը:

Մեր դիտարկմամբ՝ ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից ներկայացված պատճառաբանությունը միանգամայն հիմնազուրկ է, քանի որ Սպառողի հետ կնքված պայմանագրով Կողմերի պատասխանատվության հարցի լուծումը նախատեսված է իրականացնել **№ 358-Ն որոշմամբ սահմանված** դրույթներով: Նման իրավիճակում որևէ նշանակություն չունի տվյալ իրավական ակտը ուժ կորցրած է ճանաչվել, թե՞ ոչ:

Ավելին, Այդ Որոշմանը փոխարինող **№ 517-Ն որոշմամբ** սահմանված չէ դրանում նախատեսված դրույթների հետադարձ ուժի հնարավորությունը, հետևաբար դրա դրույթներ չեն կարող տարածվել այն իրավահարաբերությունների վրա, որոնք ծագել են նախքան այդ իրավական ակտի ընդունումը:

Տվյալ դեպքում փոփոխություն չի իրականացվել նաև ՀԷՑ ՓԲԸ-ի և Սպառողների միջև կնքված պայմանագրերում, և Կողմերի պատասխանատվության հարցը չի վերապահվել № 517-Ն Որոշումամաբ սահմանված դրույթներին: Մինչդեռ ՀԷՑ ՓԲԸ-ն պարտավոր էր իր

գործունեության ոլորտի առանցքային իրավական ակտի փոփոխություններին համընթաց՝ փոփոխություններ կատարել նաև իր ծառայություններից օգտվող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերում:

Այսպիսով, վերը ներկայացված փաստերի և հիմնավորումների հիմնա վրա ՀԷՑ ՓԲԸ-ն իր պարտականությունները չկատարելու համար Դիմումատուի վճարեց տույժ՝ **№ 358-Ն Որոշմամբ սահմանված** դրույթներին համապատասխան, որը հաշվարկվեց Դիմումատուի կողմից ընթացիկ ամսում ծախսված էլեկտրաէներգիայի համար ներկայացված վճարման հաշվում և նվազեցվեց նրա ծախսած էլեկտրաէներգիայի արժեքից:

Խնդիր 2

Դիմումատուի ներկայացրած տվյալների համաձայն՝ 2025թ. Հոկտեմբերին իր բնակարանում հանկարծակի հոսանքազրկման և անկանոն միացման փորձերի արդյունքում վնասվել է գազի կաթսան (Ariston): Դիմումատուն գազի կաթսայի աշխատանքը վերականգնելու համար դիմել է մասնագետի: Վերջինիս կողմից տրված գրավոր եզրակացությամբ՝ գազի կաթսայի անսարքությունն առաջացել է պլատայի այրման արդյունքում, որն առաջացել է էլեկտրականության տատանումների պատճառով:

Այս դեպքում ևս ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից նախազգուշացում չի իրականացվել հոսանքազրկման մասին, իսկ Գազի կաթսայի պլատայի վերանորոգման համար Դիմումատուն վճարել է 30,000 ՀՀ դրամ:

Այս դեպքում ևս Դիմումատուի անունից ՀԷՑ ՓԲԸ-ին ներկայացվել է գրավոր դիմում, որով բարձարձայնվել է ՀԷՑ ՓԲԸ-ի մեղավորությունը Դիմումատուի գույքի վնասման հարցում, ինչպես նաև հիմնավորվել է ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից Դիմումատուի վնասը հատուցելու պարտականությունը՝ ստորև մեջբերված իրավական դրույթներով.

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 25.12.2019թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները հստատելու և ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006թ. դեկտեմբերի 27-Ի թիվ 358-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 517-Ն որոշման համաձայն՝ Բաշխողը կրում է մարդկանց կյանքի, գույքի և շրջակա միջավայրի անվտանգությունն ապահովող էլեկտրասարքավորումների աշխատանքն ապահովելու պարտականություն (1-ին հեդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետ):

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 559-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Էներգամատակարարման պայմանագրով պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում պարտավորությունը խախտած կողմը պարտավոր է մյուս կողմին հատուցել պատճառված իրական վնասը:

Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրական վնասը իրավունքը խախտված անձի ծախսերն են, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (…):

Օրենսգրքի 559-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե օրենքի կամ այլ իրավական ակտերի հիման վրա իրականացվող էներգիայի սպառման ռեժիմի կարգավորման արդյունքում աբոնենտին էներգիա մատուցելիս թույլ է տրվել ընդհատում,

էներգամատակարարող կազմակերպությունը, մեղքի առկայության դեպքում, պատասխանատվություն է կրում պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից ամբողջությամբ փոխհատուցվեց գույքին պատճառված վնասը,որն առաջացել էր Դիմումատուի բնակարանում էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատումից հետո էլեկտրամատակարարման վերականգնման ժամանակ:

Ամփոփելով սույն վերլուծական աշխատանքում ներկայացված գործերով մեր կողմից իրականացված աշխատանքի արդյունքները, եզրահանգում ենք, որ Էներգամատակարարման պայմանագիրը քաղաքացիաիրավական համաբերությունների կարգավորման դասական պայմանանագրերից մեկն է, որով լիարժեք ապահովված են սպառողի իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Այս պայմանագրում ևս իրավական ակտերին հղումներ պարունակող դրույթները եթեակա են կատարման տվյալ ակտում ամրագրված կանոններով՝ նույնիսկ այդ ակտերի ուժը կորցրած ճանաչվելուց հետո:

Մեր համոզմամբ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտը դադարում է գործել որպես համընդհանուր և համապարտադիր վարքագծի կանոն և չի կարող հանդիսանալ որպես նոր ծագող հարաբերությունների իրավական կարգավորիչ: Սակայն, բոլոր այն դեպքերում, երբ պայմանագրի կողմերը իրենց միջև ծագած հարաբերությունների կարգավորման համար հղում են կատարում այս կամ այն իրավական ակտի դրույթներին, ապա այդ դրությները կողերի և դատարանի համար ընկալվում են որպես պայմանագրային դրույթներ և տվյալ հարաբերություն կողմերի համար պահպանում են իրենց կարգավորիչ դերը նույնիսկ եթե տվյալ իրավական ակտը ճանաչվել է ուժը կորցրած:

Դեկտեմբեր 2025թ.

Կատարող, իրավաբան՝
Նաիրա Ավետիսյան

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն, Կենտրոնական գրասենյակ (Երևան)